

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քանի որ հայերենին այնքան էլ լավ չեմ տիրապետում (բնականաբար, դա իմ բացթողումն է), սակայն բավականին քաջատեղյակ եմ, թե ինչպիսին է այնպիսի թերթի խնդիրը, որը, իրոք, նշանակալի դեր է կատարում Վրաստանի հայալեզու քաղաքացիներին տեղեկատվություն տալու տեսանկյունից: Թերթի խնդիրն է՝ հայալեզու ընթերցողին ծանոթացնել այն երկրին, որտեղ նրանք ապրում են, տվյալ պարագայում՝ Վրաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքի նորույթներին: Դա անհրաժեշտ է, որպեսզի մեր հայրենակից էթնիկ հայերն իրենց առավել լավ զգան՝ որպես Վրաստանի զավակներ, այնպես, ինչպես վրացիներս ենք համարվում Վրաստանի զավակներ, այսինքն, մեր եղբայրներ, ինչպես անվանում ենք՝ վիրահայեր - «վրացի հայեր»: Եթե հնարավոր է, որ կան «վրաց հրեաներ», ապա ոչ նվազ արդարացի կլինի հիշատակել նաեւ «վրացահայերին»:

Կարծում եմ, «Վրաստան» թերթը, չնայած իր ֆինանսական, թե մարդկային նվազ ռեսուրսներին, կարողացավ մեծացնել իր ավանդը «վրացահայերի» տեղեկացմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդական դիվանագիտությունը (դա, իրոք, անհրաժեշտություն է), կրթությունը, առողջապահությունը, մշակույթը, զբոսաշրջությունը, սպորտը, էկոնոմիկան եւ առեւտուրը, գիտությունն ու տեխնիկան, լրատվամիջոցները, բնապահպանությունը եւ այլն: Բոլոր այս ոլորտներում Վրաստանի հայազգի հասարակայնությունն արժանի է ստանալ լիարժեք տեղեկատվություն:

Գիտեմ, որ թերթի խմբագրությունն առանց այդ էլ հաջողությամբ իրականացնում է վերոնշյալը, սակայն ավելորդ չեմ համարի մեկ անգամ եւս ընդգծել այս մեծ առաքելությունը:

Մեկ անգամ եւս անկեղծորեն շնորհավորում եմ «Վրաստան» թերթի խմբագրությանը եւ մաղթում հաջողություններ աշխատանքում, իսկ նրանց ընտանիքներին՝ երջանկություն ու բարիք:

ՌԵՎԱԶ ԳԱՉԵՉԻԼԱՁԵ

Պրոֆեսոր, Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ, Հայաստանում Վրաստանի նախկին դեսպան

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԸ ԻՆՁ ՀԱՐԱԶԱՏ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ուրախ եմ, որ անցնելով տարբեր հասարակական-քաղաքական կազմավորումների միջով, «Վրաստան» թերթն իր 100-ամյա գոյության ընթացքում, մշտապես ձեռքը պահելով փոփոխություններով առլեցուն աշխարհի զարկերակին, անվարան եւ անսասան ծառայել է իր նպատակին, ժողովրդին, վիրահայությանը հաղորդել հավաստի լուրեր Վրաստանի, մայր հայրենիքի, աշխարհասփյուռ հայության մասին, արձագանքել կյանքի տարբեր ոլորտների գործունեությանը, ուրվանկարների, դիմանկարների, հուզական ակնարկների միջոցով վերհանել ստեղծագործողներին, հանրայնացրել նրանց գործերը, արտացոլել կյանքի առաջընթացը, ահազանգել հիմնախնդիրների մասին, կամրջել բարեկամ ժողովուրդներին, գործել՝ ազգին ու ժողովրդին նվիրական ծառայության առաքելությամբ: «Վրաստան» թերթը տասնամյակներ շարունակ տարբեր հաճախականությամբ մտել է ամեն հայի, նաեւ ոչ հայի տուն, ընտանիք ու կառույց, ընթերցողին հաղորդակից դարձրել միջավայրին, երկրին եւ հասարակության կյանքին:

Թանկագին «Վրաստան» ու «վրաստանցիներ», թերթի խմբագրության անխոնջ աշխատակիցներ, շնորհավորում եմ ձեր 100-ամյա հոբելյանը: Հիրավի, դուք ինձ հարազատ եք, սրտամոտ, իմ եսի անբաժանելի մասնիկը: Մաղթում եմ ձեր նվիրական աշխատանքով կյանքի ոլորաններով անցնող թերթի ճանապարհը շարունակեք պահել կայուն, ամրակուռ, լինեք ամենուր եւ առմիշտ՝ վստահելի, հասկանալի, հարազատ եւ սպասելի: Մաղթում եմ 100-ամյակը դառնա անընդմեջ գոյության հազարամյակ...

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լրագրող

ԱՊՐԻԼԻ 14-Ը՝ «ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ»

ԼԻԱՆԱՆ՝ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ԱՍՊԵՏ - ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Ապրիլի 14-ին՝ Մայրենի լեզվի օրվա առիթով Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում անցկացվեց միջոցառում, որտեղ վրացերենի ուսուցման, հանրայնացման, եւ այն անաղարտ պահելու գործում առանձնահատուկ ներդրման համար ԹՊՀ ուսանող, Վրաստանի Առաջին ալիքի հեռուստալրագրող Լիանա Մարգարյանը պարգեւատրվեց Ոսկե մեդալով: Պարգեւատրվեցին նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների մի շարք ղեկավարներ, լրագրողներ եւ ուսանողներ:

Պարգեւատրվել են նաեւ Հանրային հեռարձակողի լրագրող, Թբիլիսիի պետական համալսարանի ուսանողուհի Ռամիլիա Ալիեւան, «Վրացերենն իմ պետական լեզուն» էսսեների մրցույթի հաղթողներ՝ բուհի հումանիտար ֆակուլտետի «1+4» ծրագրի ուսանողներ, Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի շրջանավարտ Էկա Մեհրաբյանը եւ Ծալկայի մունիցիպալիտետի Դարաքով գյուղի հանրային դպրոցի շրջանավարտ Վլադիմեր Տերսենովը:

Մրցանակաբաշխությանը իր ելույթում Վրաստանի Լեզվի պետական դեպարտամենտի ղեկավար Գիորգի Ալիբեգաշվիլին նշեց, որ Պետական լեզվի դեպարտամենտը մշակում է «Պետական լեզվի ռազմավարության» նոր ծրագիր, որն արտացոլելու է լեզուն ամրապնդող բոլոր օրենսդրական փոփոխությունները: Կարեւորելով բուհի դերը լեզվի պահպանման գործում, նա շեշտել է, որ պետական լեզվի՝ վրացերենի ճակատագիրն այսօր հենց երիտասարդների ձեռքում է, այնպես, ինչպես 1978 թվականին, երբ հենց երիտասարդներն արտահայտեցին իրենց անկեղծ ու նվիրվական սերը մայրենիի՝ վրացերենի հանդեպ, դեմ գնալով խորհրդային իշխանությունների ռուսականացման քաղաքականությանը:

«Վրաստան» թերթում Լիանա Մարգարյանի հաջողություններին ու մրցանակներին առաջին անգամ չէ, որ անդրադառնում ենք: Եվ ամեն անգամ հպարտություն ապրում մեր երիտասարդ հայրենակցուհու ոչ միայն անմնացորդ աշխատասիրության, նպատակասլացության, այլեւ նրա՝ որպես հայկական դպրոցի շրջանավարտի, վրաց իրականության մեջ լիարժեք ինտեգրվելու համար: Հպարտ ենք, այս արդարեւ արժանի մրցանակի համար եւս, որովհետեւ Լիանան իսկապես փայլուն տիրապետում է վրացերենին:

«Վրաստան» թերթը սիրով միանում է շնորհավորանքներին, ստորեւ ներկայացնելով Լիանա Մարգարյանի՝ մեզ հետ կիսած ուրախության ու երախտիքի խոսքերը:

«Լրագրող եւ հաղորդավար Լիանա Մարգարյանը պարգեւատրվում է Թբիլիսիի պետական համալսարանի (ԹՊՀ) Ոսկե մեդալով՝ գրական վրացերենով խոսելու եւ լեզուն պահպանելու համար»:

Երբ համալսարանի դահլիճում ռեկտոր Գիորգի Շարվաշիձեն հնչեցրեց այս խոսքերը, ես մի պահ մտածեցի, որ միգուցե եւս մեկ Լիանա է մասնակցում Մայրենիի օրվան նվիրված միջոցառմանը: Բառերը երբեք չեն կարող արտահայտել իրական հույզերը: Դա էր պատճառը, որ մրցանակաբաշխության ժամանակ զարմանքից եւ անսպասելիությունից, իհարկե, չկարողացա ասել այն, ինչ ցանկանում էի: Ուստի նաեւ «Վրաստան» թերթի միջոցով կփորձեմ խոսել համալսարանի, Առաջին ալիքի եւ վրաց լեզվի հետ իմ անխախտ կապի մասին: Ես հաճախ ասում եմ, որ վրացերենն ինձ համար երբեք երկրորդ լեզու չի եղել, ես այն մշտապես համարել եմ մայրենի լեզու: Սոցիալական եւ քաղաքական գիտությունների ֆակուլտետ ընդունվելը է՛լ ավելի ամրացրեցին իմ այս զգացումը: Թբիլիսիի պետական համալսարանը արդարացիորեն կոչվում է «մայր բուհ», քանի որ ծնողի նման, համբերատար սովորեցնում է յուրաքանչյուր ուսանողին այն արժեքները, որոնք ներմուծվել են դարերի ընթացքում եւ վերահաստատվել 1978 թվականի ապրիլի 14-ին: Միակը, ինչով շատ հպարտ եմ, այն է, որ համալսարանի ուսանող եմ եւ 7 տարի առաջ չեմ սխալվել իմ ընտրության մեջ: Ես «1+4» -ի ուսանող էի, հետո՝ նույն բուհի բակալավր եւ, ապա Մեդիահոգեբանության մագիստրոս... իսկ այսօր՝ դեկան Թամար Դոլբաիայի աջակցությամբ, աշխատում եմ ԹՊՀ-ում եւ հետագայում, հավանաբար, կընդունվեմ դոկտորանտուրա, այսինքն, ես անցել եմ գիտելիքի տաճարի բոլոր աստիճանները եւ չեմ պատկերացնում ինձ առանց մայր բուհի: Ես նույնքան հպարտ եմ նաեւ որպես լրագրող եւ Առաջին ալիքի վրաց լեզվով հաղորդավար, այն, որ այս խմբի / ընտանիքի անդամ եմ: Լրագրող, ով ամեն առավոտ վրացերենով ողջունում է ամբողջ Վրաստանը, ուստի այս մրցանակը շատ կարեւոր է եւ է՛լ ավելի պարտավորեցնող: Մեծ հույս ունեմ, որ միասին կարող ենք մեծ աշխատանք կատարել՝ խրախուսելով ազգային փոքրամասնություններին: Ես կցանկանայի շատ երիտասարդների համար օրինակ դառնալ եւ ցույց տալ, որ անհնար ոչինչ չկա:

Այս մրցանակն ու ուրախությունը, ես արդարացիորեն կիսում եմ պրոֆեսոր Մաիա Թորաձեի հետ, ով իմ զարգացման եւ հաջողության գրավականը դարձավ: Դիմելով բուհի հարգարժան ռեկտոր պարոն Գիորգիին, համալսարանի հարգելի աշխատակիցներին, եւս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում այս մրցանակին ինձ արժանի համարելու համար: Նաեւ, ժամանակին ճիշտ ընտրություն կատարելու համար, շնորհակալություն եմ հայտնում իմ ընտանիքին եւ 104 դպրոցի ուսուցչուհի Մարինա Արշակյանին՝ իմ մեջ լրագրողին բացահայտելու համար ու նաեւ իմ բոլոր ուսուցիչներին, դասախոսներին, ովքեր առայսօր իմ կողքին են:

Այսօր, վաղը եւ ընդմիշտ ես կծառայեմ համալսարանին, վրաց լեզվին եւ հայ-վրացական հարաբերություններին:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ԱՊՐԻԼԻ 13-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ՕՐ

Զագա Ալեքսիձե

Հայագիտությունը հումանիտար գիտությունների համալիր է, որն ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը, լեզուն, գրականությունը, կենցաղը, մշակույթը: Այն վրացագիտության եւ Կովկասի ալբանիստիկայի հետ մեկտեղ, կազմում է կովկասագիտության անկապտելի մասը:

Հետաքրքիր պատմություն ունի հայագիտությունը Վրաստանում: Վրաց-հայկական բազմադարյա սերտ հարաբերությունները, Վրաստանի վերաբերյալ հայկական աղբյուրների բազմազանությունը, Վրաստանում հայ բնակչության ի հայտ գալը՝ նպաստեց հայագիտության հետազոտությունների զարգացմանը մի քանի ուղղություններով (պատմություն, գրականություն, ժողովրդագրություն, աղբյուրագիտություն, տեքստաբանություն, ժողովրդագրություն, ճարտարապետության պատմություն):

Վրաց հայագիտության առաջին աղբյուրը հիմնվեց Թբիլիսիի պետական համալսարանում: Այնտեղ հայագիտական առարկաները դասավանդվում էին համալսարանի հիմնադրման (1918 թ.) օրվանից: 1922 թվականին հիմնվեց հայագիտության ամբիոնը (վարիչ՝ Լեոն Մելիքսեթ Բեկ, պրոֆեսոր (1890-1963թթ.): Իսկ 1945 թվականից Թբիլիսիի պետական համալսարանում արեւելագիտության ֆակուլտետում բացվեց հայագիտության բաժինը:

Վրաց հայագիտության զարգացումը հիմնված է աշխարհահռչակ գիտնականներ Իվանե Ջավախիշվիլու, Ակակի Շանիձեի, Գիորգի Չուբինիշվիլու, Իլիա Աբուլաձեի, Իվանե Շիլակաձեի եւ ուրիշների աշխատությունների վրա:

Արդի վրաց հայագիտությունն ուսումնասիրում է վրաց եւ հայ ժողովուրդների պատմության, մշակույթի, լեզվի, գրականության եւ կենցաղի նույնականության թեմատիկան:

Թբիլիսիի պետական համալսարանից բացի, վրաց հայագետներն ակտիվորեն գործ ունեն նաեւ Վրաստանի տարբեր գիտական կենտրոններում եւ այսօր էլ շարունակում են գործել տարբեր ուղղություններով՝ հայ-վրացական լեզվական եւ գրական հարաբերություններ, աղբյուրագիտություն եւ տեքստաբանություն, ժողովրդագրություն, արվեստագիտություն: Վրացերեն են թարգմանվում հին հայկական աղբյուրները՝ դիտողություններով ու մեկնաբանություններով:

Վրաց հայագիտության բացառիկ նշանակության, հայ-վրացական հարաբերությունների հետազոտման անհրաժեշտության, ինչպես նաեւ Հայաստանի եւ հայ ազգի նկատմամբ բացառիկ վերաբերմունքի վկայությունն է այն փաստը, որ Վրաստանում հատուկ նշվում է Վրաց հայագիտության օրը: Այդ օրը 1981 թվականի ապրիլի 13-ին հիմնվեց՝ ակադեմիկոս, ԹՊՀ-ի հայագիտության ամբիոնի բազմամյա վարիչ Զագա Ալեքսիձեի նախաձեռնությամբ: Այս տարի այդ նախաձեռնության հոբելյանական տարին է, ապրիլի 13-ին նշվեց Վրաց հայագիտության նշանավորման 40-րդ տարին:

Թանկագին գործընկերներ, ի սրտե շնորհավորում եմ Վրաց հայագիտության օրվա առիթով: Նպատակամղվածություն եւ սեր, հավատարմություն եմ մաղթում ձեր բարի ու շնորհակալ գործի կատարման համար: Երկարակեցություն, երիտասարդական ավյուն եմ մաղթում իմ ուսուցիչ, վրաց հայագիտության նահապետ, ակադեմիկոս Զագա Ալեքսիձեին:

ՆԻՆՈ ԱՓՑԻԱՈՒՐԻ

Հայագետ, պատմական գիտությունների դոկտոր, Թբիլիսիի պետական համալսարանի գիտաշխատող, 2003-2019 թվականներին՝ Հայաստանում Վրաստանի դեսպանատան խորհրդական, Վրաստանի Արտաքին գործերի նախարարության խորհրդական

COVID - 19

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ ԿԿԻՐԱՌՎԻ ԼՈՔԴԱՈՒՆ՝ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն Առաջին ալիքի հեռուստաեթերում տված հարցազրույցում կանգ առավ այն պայմանների վրա, որոնք կարող են հանգեցնել նոր սահմանափակումների ներդրման եւ հին սահմանափակումների վերականգնմանը: Նրա խոսքով, եթե համավարակային ցուցանիշը գերազանցի 4 տոկոսը, կառավարությունը կարող է որոշում կայացնել նոր լոքդաունի մասին:

Նախարարի խոսքով, իշխանությունները վերահսկում են համավարակային իրավիճակը եւ այս պահին եզրափակվում են միայն առկա սահմանափակումների պահպանման վերահսկողության ուժեղացմամբ:

- Դրական լինելու մակարդակի հետ մեկտեղ, մենք հետեւում ենք վարակի զարգացման տեմպերին: Մոտեցումը մնում է նույնը: Երբ դրական լինելու մակարդակը լինի 4%-ից բարձր, դա կնշանակի, որ մենք պետք է սկսենք արդեն խոսել լոքդաունի, փակման, խստացումների մասին:

Այս փուլում մենք դիտարկում ենք իրավիճակը: Մեր մոտեցումն է հնարավորինս խստացնել կանոնների պահպանումը եւ մոնիտորինգը, քանի որ մենք ուզում ենք, որ արդյունավետ կառավարման պայմաններում տնտեսությունը կանգ չառնի, քանի որ գիտենք, թե դա ինչ հետեւանքների կարող է հանգեցնել:

Այսօր ամենամեծ սպառնալիքը ռեստորանային օբյեկտներն են ներկայացնում, որտեղ պարտադիր պայմաններին հետեւում են ամենից քիչը: Այլ ոլորտների մասին խոսք չկա: Այս փուլում խոսքը միայն ամենաբարձր ռիսկայնություն ունեցող հաստատությունների մասին է, որոնցում անցկացվում են սոցիալական միջոցառումներ,- ասաց նախարարը:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄԿՐԵԼԻՁԵ. «ՄԵԶ ՄՈՏ ԵԿԱՎ ՍԿՍՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՐՐՈՐԴ ԱԼԻՔԸ»

ՄԱՅԻՍԻ 4-11-Ը ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ամիրան Գամղրելիձեն նշել է, որ երկրում դիտվող դեպքերի թվի աճի դինամիկան ուշագրավ է եւ պահանջում է հատկապես պատասխանատու մոտեցում ինչպես իշխանության, այնպես էլ՝ քաղաքացիների կողմից: Մեկ անգամ եւս ընդգծեց սահմանված կանոնակարգերին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը, ինչը երկիրը փրկելու է վիրուսի երրորդ ալիքից ու, համապատասխանաբար, խիստ սահմանափակումներ մտցնելու անհրաժեշտությունից:

Համակարգող խորհուրդը մեկ անգամ եւս հորդորում է քաղաքացիներին պատշաճ կերպով կրել պաշտպանիչ դիմակներ, պահպանել սոցիալական հեռավորություն եւ խուսափել մարդաշատ հավաքույթներ ու սոցիալական միջոցառումներ կազմակերպելուց, որոնց անցկացումն արգելվում է կառավարության որոշմամբ: Միաժամանակ, ինչպես հայտնի է, Վրաստանի կառավարության որոշումն արգելում էր սոցիալական միջոցառումների (օրինակ՝ հարսանիքներ, տարեդարձեր, հոգեհացեր եւ այլն) եւ զանգվածային ժամանցային միջոցառումների անցկացման համար տարածքի փոխանցում/զիջում: Այս սահմանափակման խախտումը կհանգեցնի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:

Կառավարության վարչակազմի խոսքով, վարչապետի հանձնարարականներին համապատասխան, համապատասխան գերատեսչությունները կխստացնեն վերահսկողությունը՝ վիրուսի տարածումը կանխելուն ուղղված բոլոր կանոնակարգերի կատարման նկատմամբ:

Այնուամենայնիվ, ըստ խորհրդի որոշման, հիմնվելով առկա համավարակաբանական իրավիճակի գնահատման վրա, այս փուլում շարժման սահմանափակումը 21:00-05:00-ը ուժի մեջ է մնում:

Խորագիրը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 140 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 140 072 381 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 004 216 հազարը: Ապաքինվել է 118 միլիոն 989 328 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **32 229 561** դեպք: Այստեղ մահացածների թիվը **579 053** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **14 465 797**-ի, մահացածներինը՝ **175 238**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **13 758 093**, մահացել՝ **365 954** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 187 879**, վարակի հետեւանքով մահացել՝ **100 073** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Իտալիան, Իսպանիան ու Գերմանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **207 103-ի**, մահացածներինը՝ **3 835-ի**, ապաքինվածներինը՝ **186 200-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **294 211** մարդ: Վարակից մահացել է **4045,** ապաքինվել՝ **257 942** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **293 321,** մահացել՝ **3 916,** ապաքինվել՝ **279 831** մարդ:

Ապրիլի 16-ին կորոնավիրուսով վարակման ***1077*** *նոր դեպքերից* ***641-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 97****, **Իմերեթիում՝ 52, Քվեմո Քարթլիում՝ 44, Շիդա Քարթլիում՝ 38, Գուրիայում՝ 27, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 109, Կախեթիում՝ 36, Մցխեթա-Մթիանեթիում՝ 22, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 6, Սամցխե-Ջավախեթիում՝ 5:***

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ապրիլի 16-ի դրությամբ, ընդհանուր առմամբ, պատվաստվել է 26 427 մարդ,- այս մասին տեղեկատվությունը տարածում է Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

«Պատվաստվելու համար ամրագրում կատարելու նպատակով՝ այցելեք booking.moh.gov.ge կայք կամ զանգահարել՝ 15-22 հեռախոսահամարով: Ձեզ առողջություն ենք մաղթում»,- հայտարարում են Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնում:

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

«ՎՐԱՑԻՍ ՈՒ ՀԱՅԸ ՄԻԱՍԻՆ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԴԻՄԱԿԱՅԵՑԻՆՔ ԹՇՆԱՄՈՒՆ...»

1991 թվականից ի վեր նորանկախ Վրաստանում փետրվարի 25-ին նշվում է 1921 թվականի փետրվարյան մարտերին երկրի անկախության համար եւ խորհրդային բռնազավթման դեմ պայքարում զոհվածների հիշատակության օր:

Վրաստանի պատմության մեջ 1921 թվականի փետրվարի 18-25-ը նշանավորվեց խորհրդային Կարմիր բանակի դեմ պաշտպանական ծանր մարտերով ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Թբիլիսիի մերձակայքում՝ Կոջորիում եւ Տաբախմելայում: Փետրվարի 25-ին Կարմիր բանակը գրավեց Թբիլիսին, եւ երկիրը խորհրդայնացվեց: Պաշտպանական մարտերին Կարմիր բանակի դեմ կռվում էին յունկերներն ու Թիֆլիսի ռազմական ուսումնարանի կադետները:

Ստորեւ ներկայացվող նյութի հերոսն ընթերցողին քիչ եթե չասենք, ընդհանրապես անծանոթ կամ քիչ հայտնի, վերոնշյալ մարտերի ակտիվ մասնակիցներից մեկը Մելիք Սոմխյանցն է: Ծնունդով քութայիսցի Մելիք Սումխյանցը լեհական բանակի շարքերում մասնակցել է նաեւ Երկրորդ աշխարհամարտին, եղել է լեհական բանակի գնդապետ:

Հայտնի վրաց պատմաբաններ Նիկոլոզ Մաթիկաշվիլու եւ Միխեիլ Կվալիաշվիլու հեղինակությամբ լույս տեսած «Յունկերներ» գրքում հիշատակության հեղինակները նշում են, որ Լեհաստանում իրենց ռազմական ծառայությունն են անցել Վրաստանի ժողովրդավարական հանրապետության (1998-1921թթ.) 87 քաղաքացիներ, այդ թվում՝ 6 գեներալ, 36 ավագ սպա եւ 46 նախկին յունկերներ, ովքեր այն ժամանակ լքեցին հայրենիքը եւ հայտնվեցին վտարանդիության մեջ, եւ այդ թվարկության շարքում տասներորդը Մելիք Սոմխյանցն է, ազգությամբ՝ հայ, «Վրաստանի նվիրյալը»:

Մելիք Սոմխյանցն ընդամենը 21 տարեկան էր, երբ 1921 թվականին, փետրվարի բքախառն սառնամանիքին պայքարում էր բոլշեւիկների դեմ Տաբախմելայում: Նրա զինակիցներ Մաթիկաշվիլին, Անդրոնիկաշվիլին, Լոմկացին 45 տարի անց հիշում են Մ.Սոմխյանցին որպես «վրացիների հավատարիմ ու նվիրյալ հայի»: Ահա թե ինչ են գրում նրանք.

«...1921 թվականի փետրվարի 25-ի գիշերն էր: Տաբախմելայում սաստիկ քամին սրբում ու բերաններս էր լցնում ձյան խիտ փաթիլները: Բարակ շինելով փաթթված, սառած, սակայն ջանասիրաբար հսկում էինք պատկան տարածքը: Այդ ժամանակ կապի ծառայության միջոցով մեզ փոխանցեցին վաշտի հրամանատարի հրամանը.

- Գնացե՛ք դպրոցի ղեկավարության մոտ եւ գնդապետ Չխեիձեից կստանաք հաջորդ հրամանը...

Դրսում խլացնող քամին կրկին սուլում էր: Գնում էինք ձյան հաստ շերտի միջով, դժվարությամբ էինք տեղաշարժվում, եթե միմյանց ականջին չգոռայինք, իրար չէինք լսի: Կարեւոր էր, որ ճանապարհը չշփոթեինք ու թշնամու բանակում չհայտնվեինք: Ձեռքներիս հրացաններ ունեինք: Մեզանից ոչ մեկի 21 տարին չէր լրացել, մարմնով էլ թուլակազմ էինք: Ամրակազմը Սոմխյանցն էր՝ վրացիների հավատարիմ ու նվիրյալ հայը»:

Ավելի ուշ վրաց տարագրության պատմության եւ տարագրական գրականության հետազոտող Ռուսուդան Դաուշվիլին ներկայացրել է նախկին յունկեր Վանո Բաքրաձեի հուշերը Քութայիսիի ազնվական գիմնազիայի տնօրեն Իոսեբ Օցխելու մասին: Հենց Վանո Բաքրաձեի հետ նշյալ գիմնազիայում է սովորել Մելիք Սոմխյանցը: Բաքրաձեն պատմում է, որ հաճախ էր ընդհարվում Սոմխյանցի հետ: Եվ մի օր գիմնազիայի տնօրեն Օցխելին նրանց կանչում է իր մոտ ու մտահոգություն հայտնում, որ տղաները լավ ընկերական հարաբերություններ չունեն: Տնօրենը երկար զրուցելուց հետո կոչ է անում հաշտվել իրար հետ ու գրկախառնվել: Բաքրաձեն հիշում է, որ տարիներ անց, երբ 1921 թվականի փետրվարի 24-ին վճռվում էր Վրաստանի ճակատագիրը, թեժ մարտերի ժամանակ քիչ էր մնում թշնամու ծուղակն ընկնի, այդ ժամանակ նրան օգնության է հասնում Մելիք Սոմխյանցը. «...Վրացիս ու հայը միասին հեշտությամբ դիմակայեցինք թշնամուն: Կռվի դաշտում երկուսս էլ կատարեցինք Իոսեբ Օցխելու ցանկությունը եւ ընկերաբար փարվեցինք միմյանց...»:

Ինչպես վերը նշեցինք, 20-րդ դարի 30-ական թվականներին Մելիք Սոմխյանցը եղել է նաեւ լեհական բանակի գնդապետ, Երկրորդ աշխարհամարտին կռվել է լեհական զորամասի շարքերում, մասնակցել Իտալիայի հյուսիսում Մոնտե Կասինո բարձունքի պաշտպանական եռամսյա ճակատամարտին, որը այդ պատերազմի ամենաարյունահեղ մարտերից էր ու վճռորոշ դեր է խաղացել գերմանացիների դեմ լեհերի հաղթանակի համար:

Մեր հայրենակից Մելիք Սոմխյանցն այդ կռվում փայլուն կերպով ղեկավարել է չորրորդ գումարտակը եւ ձեռք է բերել մեծ համբավ: Այս մասին գրում է նաեւ լեհական բանակի սպա, գրող, լրագրող Մելչիոր Վանկովիչն իր «Մոնտե Կասինո» գրքում, որը հաստատում է հանրաճանաչ պատմաբան Զբիգնեւ Զալուսկին:

Կյանքի վերջին տարիները Մելիք Սոմխյանցն անց է կացրել Անգլիայում:

Ի դեպ, արդեն մի քանի տարի է, ինչ Լեհաստանի տարբեր քաղաքներում կազմակերպվում է երկրում ռազմական ծառայություն անցած տեղի հայերի մասին շարժական ցուցահանդեսները: Ցուցահանդեսի ղեկավար Դարիուշ Լորանտինի խոսքով՝ Լեհաստանում շատերն անգամ չգիտեին, որ երկրի անկախացման պատմության մեջ ազգությամբ հայ զինվորներն ու սպաները մեծ ներդրում ունեն:

Հավելենք նաեւ, որ վերջերս «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն») թերթը եւս վրաց ընթերցողին տեղեկություններ է տրամադրել Վրաստանի անկախության եւ ազատության համար մարտնչող քութայիսցի հայազգի Մելիք Սոմխյանցի մասին:

Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ապրիլի 14-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանդես գալով Ազգային ժողովում, կառավարության հարցուպատասխանի ընթացքում հայտարարեց, որ պատրաստվում է հրաժարական տալ ապրիլի վերջին տասնօրյակում, որպեսզի հունիսի 20-ին տեղի ունենան արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

- Հրաժարական պատրաստվում եմ տալ ապրիլի վերջին տասնօրյակում, որից հետո պատշաճ ընթացակարգերը պաշտպանելու համար 7-րդ օրը տեղի կունենան վարչապետի ընտրություններ, ես «Իմ քայլը» խմբակցության կողմից կառաջադրվեմ վարչապետի թեկնածու, որովհետեւ Սահմանադրության ձեւակերպումները պարտադրում են, որ լինի վարչապետի թեկնածու, մյուս խմբակցությունները վարչապետի թեկնածու չեն առաջադրի, «Իմ քայլը» խմբակցությունն ինձ վարչապետ չի ընտրի: Երկրորդ անգամ ես խմբակցության 1/3-ի կողմից կառաջադրվեմ վարչապետի թեկնածու, էլի վարչապետի այլ թեկնածու չի առաջադրվի, կրկին վարչապետ չի ընտրվի, ԱԺ-ն իրավունքի ուժով կհամարվի լուծարված, որից հետո հունիսի 20-ին կնշանակվեն արտահերթ ընտրություններ,- ասաց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ նրանք, ովքեր կփորձեն շեղվել ժողովրդի առաջ ստանձնած քաղաքական պայմանավորվածություններից, դա կլինի քաղաքական ինքնասպանություն:

- «Իմ քայլը» խմբակցությունն ինձ կընտրի վարչապետ, եւ դրանով թեման կփակվի,- ասաց վարչապետը:

Հիշեցնենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» եւ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունների ղեկավարների հետ հանդիպումից հետո, հայտարարել էր, որ հունիսի 20-ին Հայաստանում կանցկացվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՍԱՀՄԱՆՎԵԼ Է ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ

Ապրիլի 13-ից Հայաստանում սկսվեց կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ լայնածավալ պատվաստումների գործընթացը:

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի առողջապահության նախարարությունը, պատվաստման համար առանձնացվել են ռիսկի խմբեր, դրանք են 65 եւ բարձր տարիքի անձինք, 18-64 տարեկան քրոնիկ հիվանդները, տարեցների խնամքի կենտրոնների բնակիչներն ու աշխատակիցները, սոցիալական խնամքի կենտրոնների աշխատակիցները:

Նշենք, որ Հայաստան են ներկրվել 24000 դեղաչափ «AstraZeneca» եւ 15000 դեղաչափ՝ 7500 անձի համար «Sputnik-V» պատվաստանյութերը: Պատվաստումներն իրականացվում են կամավորության սկզբունքով՝ ռիսկի խմբերի շրջանում:

Ռիսկի խմբերում ընդգրկված 55-ից ցածր տարիքի անձինք կպատվաստվեն «Sputnik-V» պատվաստանյութով, իսկ 55-ից բարձր տարիք ունեցողները՝ «AstraZeneca»-ով:

Հավելենք նաեւ, որ նախկինում ձեռքբերված 2000 դեղաչափ «Sputnik-V» պատվաստանյութով պատվաստվել են COVID-19 սպասարկող բժշկական կենտրոնների բուժանձնակազմերը:

Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հայտարարությամբ՝ Հայաստանում «AstraZeneca»-ով պատվաստում կթույլատրվի իրականացնել միայն 55 տարեկանից բարձր քաղաքացիներին:

«AstraZeneca»-ով կպատվաստվեն ռիսկի խմբի անձինք: Ռիսկի առաջին խումբը 65 տարեկան եւ բարձր տարիքի քաղաքացիներն են, բուժաշխատողները՝ 55 տարեկանից բարձր, քրոնիկ հիվանդները՝ 55 տարեկանից բարձր եւ սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչներն ու աշխատակիցները՝ 55 տարեկանից բարձր:

- Քանի որ «Sputnik V» պատվաստանյութի խմբաքանակը սահմանափակ է, օգտագործման ցուցումներում մենք այս պահին սահմանել ենք հետեւյալ խմբերը՝ բուժաշխատողներ՝ 18-54 տարեկան, քրոնիկ հիվանդություն ունեցող անձինք՝ մինչեւ 54 տարեկան, սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչները եւ աշխատակիցները՝ մինչեւ 55 տարեկան,- ընդգծել է նախարարը:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «SPUTNIK V» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ

Հայաստանում Ռուսաստանի հետ «Sputnik V» պատվաստանյութի համատեղ արտադրություն կազմակերպելու հարցով բանակցություններ են տարվում:

Այդ մասին հայտարարեց Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ հերքելով լուրը, թե Հայաստանը հրաժարվել է համատեղ արտադրության ռուսաստանյան առաջարկից:

- Հայաստանը որեւէ բանից չի հրաժարվել: Մեր գործընկերները էկոնոմիկայի նախարարության հետ տանում են բանակցություններ՝ նաեւ Հայաստանում նման արտադրություն կազմակերպելու,- նշեց Ավանեսյանը:

Նա շեշտեց, որ դա պետք է ենթադրի մասնագիտական, արտադրական եւ այլ ենթակառուցվածքների առկայություն:

- Ես հույս ունեմ, որ մեր դեղագործական ընկերությունները, գնահատելով շատ կարեւոր պատվաստանյութի արտադրության կարեւոր հանգամանքը, շահագրգռված կլինեն ներդրումներ անել եւ համատեղ արտադրություն բացել,- ասաց նախարարը:

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

Հայաստանի կառավարությունը քննարկեց «Տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որով առաջարկվում է կրճատել Ամանորյա ոչ աշխատանքային օրերի թիվը:

Նշվեց, որ նախագծով առաջարկվում է ոչ աշխատանքային օրերի ցուցակից հանել հունվարի 2-ը, 3-ը, 4-ը, 5-ը եւ 7-ը, որ նախագծի ընդունմամբ Հայաստանի տարեկան ՀՆԱ-ը կաճի 88 մլրդ դրամով կամ մոտ 1,5 տոկոսով: Համախառն թողարկման ծավալը կավելանա 123 մլրդ դրամով, որից առեւտրի թողարկումը կավելանա 47,5 մլրդ դրամով, արդյունաբերության թողարկումը՝ 35,4 մլրդ դրամով, ծառայությունների ծավալը՝ 33,9 մլրդ դրամով:

Կառավարությունը հավանություն տվեց նախագծին, սակայն Հայաստանի վարչապետը նշեց, որ այն մանրամասն կքննարկվի, այդ թվում՝ Ազգային ժողովում:

8 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ «Ավելի մրցունակ եւ զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ օժանդակության» համաձայնագրի թիվ տասնինը փոփոխության ստորագրման առաջարկությանը:

ԱՄՆ ՄԶԳ կողմից ներկայացված նախագծով նախատեսվում է լրացուցիչ 8 մլն 200 հազար դոլարի չափով ֆինանսական հատկացումների իրականացում, որն ուղղվելու է ենթակառուցվածքային ծառայությունների բարելավման աջակցության ծրագրերին:

Նախատեսվում է նաեւ երկարաձգել համաձայնագրի գործողության ժամկետը՝ մինչեւ 2025 թվականի սեպտեմբերի 30-ը: Ամերիկյան կողմից տրամադրվող հատկացումների ընդհանուր գումարը ներկայումս կազմում է 91,800,980.41 ԱՄՆ դոլար:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՍՏԵՂԾՎԻ ՆՈՐ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Առաջիկայում Հայաստանում կստեղծվի նոր ավիաընկերություն՝ հայկական կապիտալի եւ միջազգային գործընկերոջ համատեղ համագործակցության շրջանակում: Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի խոսքով, ընկերությունը նախատեսում է մոտավորապես մայիսի վերջին, հունիսի սկզբին արդեն տալ աշխատանքի մեկնարկը:

- Սա խրախուսվում է մեր կողմից: Դաշտը բաց է, մենք սրա մասին հայտարարել ենք, պատրաստ ենք այլ գործընկերների եւս ամեն ինչով օգնել,- ասաց նախարարը:

ՍԿՍՎԵՑ ՍԱԴԱԽԼՈ - ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՆՈՐ ԿԱՄՐՋԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 16-ին կայացավ Սադախլո-Բագրատաշեն անցակետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա, նոր կամրջի կառուցման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված հայ-վրացական միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստը: Առցանց ձեւաչափով կայացած նիստի աշխատանքների արդյունքներով տրվել է «Բարեկամություն» անվամբ նոր կամրջի շինարարության մեկնարկը:

Նիստի ընթացքում Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարության ծրագրի ղեկավար Իզաբելլա Մուրադյանը ներկայացրել է ծրագրի մանրամասներն ու ներկա փուլը: Ըստ այդմ՝ կառուցվելու է երկու առանձին կամուրջ՝ երկու ուղղություններով իրարից 1մ հեռավորությամբ: Կամուրջն ունենալու է 386մ երկարություն, ճանապարհի լայնությունը՝ 8.35մ: Յուրաքանչյուր կամրջի թռիչքահարթակի կառուցվածքի ընդհանուր լայնությունը՝ 11.85մ: Կամուրջն ունենալու է արտաքին լուսավորություն եւ ջրահեռացման համակարգ:

Կողմերը հաստատել են նախագծային փաստաթղթերը, շինարարության համար անհրաժեշտ անձնակազմի, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների ցանկը, որոնք շինարարական գոտի պետք է մուտք գործեն պարզեցված ընթացակարգով: Նիստի ընթացքում քննարկվել է որոշակի ընթացակարգեր պարզեցնելու անհրաժեշտությունը՝ ծրագրի հաջող եւ ժամանակին իրականացումն ապահովելու համար:

Հիշեցնենք, որ Սադախլո-Բագրատաշեն անցակետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա, նոր կամրջի կառուցումը հայ-վրացական համատեղ ծրագիր է, այն ֆինանսավորվում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի, Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների կողմից: Կամրջի նախագծման եւ շինարարության համար պայմանագիր է կնքվել Ariana Tunnel Dam Co. (Իրան) ընկերության հետ: Տեխնիկական հսկողությունն իրականացնում է Soosung Engineering Co., Ltd եւ Korea Consultants International Co., Ltd. (Կորեա) համատեղ գործող ընկերությունը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ

18.04.2021 Աշխարհամատրան կիրակի (Կանաչ կիրակի)

Հիսուս Քրիստոսի Հարության` Սուրբ Զատկին հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կիրակի, ի հիշատակ Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Այս եկեղեցին Սիոնի վերնատունն է համարվում, որտեղ Հիսուս Քրիստոսը հաստատեց Հաղորդության խորհուրդը: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաեւ Կանաչ կիրակի, որը, ըստ Մաղաքիա արք.Օրմանյանի, տոնի ժողովրդական անվանումն է` կապված բնության, գարնանային զարթոնքի հետ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ԱՎՏՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՓՈԽՎԵԼ ԵՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության տարածած տեղեկատվության, Վրաստանի կառավարության 2013 թվականի դեկտեմբերի որոշման մեջ կատարված փոփոխության համաձայն, ավտոկայանների եւ կայանատեղերի շահագործման կանոններն ու պայմանները փոխվել են:

Նշված տեխնիկական կանոնակարգի համաձայն, համակարգին միանալուց առաջ եւ համակարգին միանալու ամբողջ ժամանակահատվածում, ավտոկայանատեղի սեփականատիրոջ համար պարտադիր է` ապահովել եկամուտների ծառայության հետ համաձայնեցված առցանց ձեւաչափով ավտոկայանատեղի մուտքի ու ելքի մշտական (շարունակական) տեսահսկումը: Ընդ որում, ավտոկայանատեղի սեփականատերը պետք է հաշվի առնի, որ տեսահսկման նպատակով մոնտաժված ծրագրակազմը պետք է համապատասխանի եկամուտների ծառայությանը պատկանող լիցենզավորված համակարգերին:

ՍՊՈՐՏ

ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵԻ ԵՐԵՔ ՈՍԿԻՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՌԵԿՈՐԴԸ

Մոսկվայում եզրագիծը հատեց ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որը նշանավորվեց վրաց ծանրամարզիկ Լաշա Տալախաձեի նոր հաղթարշավով` երեք ոսկե մեդալ եւ համաշխարհային երկու ռեկորդ:

MOSCOW 2021
I
II

109+ կգ քաշային կարգում հանդես եկող վրաց ծանրամարզիկի հիմնական մրցակիցները հայաստանցի Գոռ Մինասյանն ու Վարազդատ Լալայանն էին: Պոկման վարժությունում 222 կգ եւ հրման վարժությունում 263 կգ, երկամարտում` 485 կգ համաշխարհային ռեկորդով, Տալախաձեն Օլիմպիական չեմպիոնի, աշխարհի քառակի չեմպիոնի տիտղոսին հինգերորդ անգամ ավելացրեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Այդ քաշային կարգում, երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրին Հայաստանի հավաքականի ներկայացուցիչներ Գոռ Մինասյանն ու Վարազդատ Լալայանը:

Օլիմպիական չեմպիոն Գիորգի Ասանիձեի մարզած Վրաստանի հավաքականից հրման, պոկման վարժություններում եւ երկրամարտում մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեցին Անտոն Պլեսնոյը (96 կգ քաշային կարգ), Ռեւազ Դավիթիձեն (հրման վարժությունում` ոսկե, պոկման վարժությունում եւ երկամարտում` արծաթե, 89 կգ քաշային կարգ), Անաստասիա Գոտֆրիդը (պոկման վարժությունում` ոսկե, 87կգ քաշային կարգ):

Ընդհանուր առմամբ, Վրաստանի հավաքականը մոսկովյան մրցաշարից տուն վերադարձավ 8 ոսկե, 4 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներով, թիմային հաշվարկում զբաղեցնելով երրորդ տեղը, առաջնությունը զիջելով միայն Ուկրաինայի (10 ոսկե, 3 արծաթե եւ 4 բրոնզե մեդալներ) եւ Բուլղարիայի (8 ոսկե, 8 արծաթե եւ 3 բրոնզե մեդալներ) հավաքականներին:

23 ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ

Մոսկովյան մրցաշարում բավական հաջող հանդես եկավ նաեւ Հայաստանի հավաքականը, որը, ընդհանուր առմամբ, նվաճեց տարբեր արժողության 23 մեդալ (5 ոսկե, 9-ական արծաթե եւ բրոնզե):

Հայաստանի հավաքականից Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեցին 89 կգ քաշային կարգում Կարեն Այվազյանը (ոսկե մեդալ` պոկման վարժությունում եւ երկամարտում, արծաթե` հրման վարժությունում), 102 կգ քաշային կարգում Սամվել Գասպարյանը դարձավ Եվրոպայի չեմպիոն, իսկ Արսեն Մարտիրոսյանը` փոխչեմպիոն, 109 կգ քաշում Սիմոն Մարտիրոսյանը դարձավ փոքր ոսկե մեդալակիր, իսկ երկամարտում «զրո» ստացավ, գերծանր 109+ քաշային կարգում Գոռ Մինասյանը դարձավ Եվրոպայի առաջնության արծաթե, իսկ Վարազդատ Լալայանը` բրոնզե մեդալակիր, առաջնությունը զիջելով միայն վրաց ծանրամարզիկ, համաշխարհային ռեկորդակիր Լաշա Տալախաձեին: 81 կգ քաշային կարգում Լիանա Գյուրջյանը եւ 96 կգ քաշում Հակոբ Մկրտչյանը դարձան Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիրներ:

ՎԱՐԿԱՆԻՇԸ` ԽԱՂԻ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏԻՉ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց աշխարհի երկրների հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը, որտեղ արտացոլվել են աշխարհի 2022 թվականի առաջնության նախընտրական խմբերում անցկացված հանդիպումների արդյունքները:

Ինչպես արդեն հաղորդել ենք, եվրոպական «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը խմբային երեք հանդիպումներում կարողացավ իր ակտիվում գրանցել ընդամենը մեկ միավոր, հետեւաբար, նախորդի համեմատ վարկանիշային սանդղակում ետընթաց է ունեցել եւ ներկայումս զբաղեցնում է 91-րդ հորիզոնականը: 9 հորիզոնականով առաջընթաց է ունեցել Հայաստանի հավաքականը, որը երեք հանդիպումներում հավաքելով առավելագույն 9 միավոր, գլխավորում է եվրոպական «J» խմբի մրցաշարային աղյուսակը: Վարկանիշային նոր աղյուսակում Հայաստանի թիմը զբաղեցնում է 90-րդ հորիզոնականը:

Ինչ վերաբերում է աղյուսակի առաջատարներին, ապա, առաջին տեղումն է աշխարհի վերջին առաջնության բրոնզե մեդալակիր Բելգիայի հավաքականը: Նրան հաջորդում են աշխարհի գործող չեմպիոն Ֆրանսիայի, Բրազիլիայի, Անգլիայի եւ Պորտուգալիայի հավաքականները:

Խ Ա Չ Բ Ա Ռ

■	1	■	2	■	3	■	■	4	■	5	■	6
7						8	■	9				
■		■		■	10				■		■	
11		12					■	13	14		15	
■	16			■	17			■		■		■
■	■		■	18	■		■	19		20		21
22			23		■	■	24					
■	■	■	25		26		■		■		■	
27	28					■	29		30		31	
■		■		■	32					■		■
33		34				■		■	35	36		37
■	38			■	■	39	■	40				
■	■		■	41	42		43	■	■		■	
44	45		46	■	47			■	48		49	
■	50					■	51			■	52	
■	53			■	54			■	55			

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Շախմատ. մտածելու համար ժամանակ չլինելը: 9.Հոգեբան Բորիս ...: 10.Փոթորիկ: 11.Զովացուցիչ ըմպելիք: 13.Մեքսիկացի ընկեր: 16.Հերիք: 17.Մեսրոպյան այբուբենի տառ: 19.Մարմնի որեւէ մասը արհեստականորեն տաքացնելու հարմարանք: 22.Ջուր ցանող սարք: 24.Քաղաք Իսպանիայում: 25.Ճապոնական շախմատ: 27.Թել տվող, մանրաթելեր ունեցող: 29.Կատակ, հանաք: 32.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 33.Իտալացի ջութակահար եւ կոմպոզիտոր ... Պագանինի: 35.Գանձարկղ: 38.Մետաքսյա նուրբ կտոր: 40.Աշխարհահռչակ հայ նկարիչ Արշիլ ...: 41.Բանաստեղծ, արձակագիր Վիգեն ...: 44.Հայ ազատագրական պայքարի գործիչ Հովսեփ ...: 47.... դե Ժանեյրո: 48.Կինոդերասանուհի Օռնելա ...: 50.Ուտելու համար պիտանի: 51.Ամբողջ թիվ, որը թվային առանցքը բաժանում է դրական եւ բացասական թվերի: 52.Օժանդակ բայ: 53.«... կանգնի, գերան կկոտրի»: 54.Կորեական ավտոմեքենա: 55.Գնացքի մետաղե ճանապարհ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆրանսիացի երգահան Լեո ...: 2.«Թռչեի ... տուն» (երգ): 3.Բարձր ու լայն ալիք: 4.Հարավամերիկյան բեռնակիր կենդանի, ուղտայծ: 5.Սուտլիկ որսկանի ընկերներից: 6.Ֆրանսիացի քիմիկոս-օրգանիկ Միշել ...: 8.Աշխարհահռչակ բալետային-պարային խումբ: 12.Գետ Հայաստանում: 14.Առանց երեսի վերմակ: 15.Համազարկային կրակի ռեակտիվ հրթիռային համակարգ: 18.Հացահատիկային բույսերի ցողունը: 19.Խումբ, զորախումբ: 20.Էլեկտրական շղթաները անջատող-միացնող սարք: 21.Ատրճանակի տեսակ: 23.Ծովակալ Ֆյոդոր ...: 26.Գուրգենը` ժարգոնով: 28.Խորհրդային գրող ... Դորոշ: 29.Ցոփ, շվայտ: 30.Վրացի դերասան ... Աբաշիձե: 31.Անգլիական պարատեսակ: 34.Ընտրովի ղեկավար մարմին, հանձնախումբ: 36.Ծույլիկի «սիրած» գնահատականը: 37.Քաղաք ԱՄՆ-ում: 39.Ազգ` Թաիլանդում: 42.Անձայն: 43.«... Նոստրա»: 45.Գույնի թունդը: 46.Սեղմ, սահմանափակ: 48.Հատապտուղ: 49.Շվեյցարացի առասպելի հերոս Վիլհելմ ...:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Դինամո: 6.Ռաֆայել: 11.Լորկա: 12.Ագարակ: 13.Դրույթ: 14.Զանգի: 16.Վրա: 17.Բագի: 18.Ոստրե: 20.Բան: 21.Ալանի: 23.Գագրա: 26.Քո: 28.Արա: 29.Դալի: 31.Լինդ: 33.Ամալ: 34.Սա: 36.Աթա: 38.Լինոր: 39.Պանամա: 42.Ին: 43.Սամբա: 44.Հաագա: 47.Կուլա: 48.Լար: 50.Յարաբ: 52.Արատ: 54.Շանթ: 56.Միրզա: 57.Այր: 58.Ռռնոց: 59.Ոհմակ: 60.Հնոց:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Իրան: 3.Ալազանի: 4.Մոկաց: 5.Որ: 6.Ռադիո: 7.Ֆաուստ: 8.Յոթվերք: 9.Լիկանի: 10.Դալիլա: 15.Նիագարա: 17.Բանան: 19.Սուրամի: 20.Բարի: 22.Լալվար: 24.Գդալ: 25.Ալանիա: 27.Որս: 30.Իլոնա: 32.Դամալա: 35.Անի: 37.Թամար: 40.Ասույթ: 41.Սալբի: 44.Հրազդան: 45.Գետաշեն: 46.Մաշտոց: 49.Նովենց: 51.Ամրոց: 53.Րա: 55.Նանտ: 57.Ացի:

Գլխավոր խմբագիր` ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ` ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու` ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը` ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն` Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445